տեսանք քաղաքն մեծամեծ ծառներով՝ պտղատու տունկերով և պարտէզներով զարդարուած, քաղաքի հարաւային եզրն զետեղուած էին զօրաց վրաններն, շատ տեղ փողոցներն լաւ կանոնաւորութիւն մի ստացած էին, քաղաքի արևելեան եզրէն հոսող գետակի աջ ու ձախ զառիվայրներն ամեն տեսակ պտղատու ծառներով պատած է մինչև ցերասխ 1 ժամ երկար տարածութեան վերայ։

Ցեղս առևտուրն բաւական յաջող է, կան քանի յաջող վաճառողներ, քաղաքական և զինուորական լաւ բժիշկներ։

Ժողովրդեան մեծ մասը հայ և թուրք է, թուրքերն ունին աղօթատեղի, հայք ևս ունէին մի եկեղեցի, տաս տարի առաջ քանդած մի մեծ հոյակապ եկեղեցւոյ հիմը դրած են, որմերը ևս բաւական բարձրացուցած և այնպէս կը մնայ։

Հայք ունին երկսեռ ուսումնարան բաւական յաջող վիճակի մէջ։